**«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի**

**EduArmenia կրթական նախաձեռնություն**

# Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

## Հետազոտական աշխատանք

**Թեմա՝** Գրական խմբակի ազդեցությունը շփվող անձնավորություն ձևավորելու հարցում


**Հետազոտող ուսուցիչ՝** Մարինա ԱՎԱԳՅԱՆ

Երևանի Համբարձում Գալստյանի անվան հ. **83**

ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

Համառոտագիր: Հոդվածում ներկայացված են գրական խմբակների արդյու նավետ գործունեության կազմակերպմանը միտված մի քանի արդի մոտեցումներ: Առաջ է քաշվում այն տեսակետը, որ աշակերտները կարող են հիմնավորապես տիրապետել մայրենի լեզվին ու գրականությանը, եթե դպրոցում կարևորվի նաև գրական խմբակների դերն ու նշանակությունը, և բարձր մակարդակով կազմակերպվեն ու անցկացվեն նմանատիպ խմբակների աշխատանքները: Այդ դեպքում սովորողը կձևավորվի որպես միջավայրի հաղորդակցմանը պատրաստ անձնավորություն:

Ներածություն

Դպրոցական կրթության լավագույն արդյունքի կարելի է հասնել միայն ուսուցչի գործուն մասնակցությամբ: Հասարակությունն այսօր անչափ բարդ առաքելություն է դրել դպրոցի ուսուցչի առջև. ակնկալվում է ոչ միայն կրթված, այլև հիմնախնդիրներից ազատ սերնդի դաստիարակում:

Այս դժվարին առաքելության իրականացումը հիմնականում ընկած է մայրենիի ուսուցչի վրա: Կարևոր է, որ աշակերտները հիմնավորապես տիրապետեն մայրենի լեզվին և գրականությանը, արդյունավետ օգտագործեն ձեռք բերած գիտելիքները, հմտություններն ու կարողությունները լեզվի գործածության տարբեր ոլորտներում:

Ինչպես գիտենք, մայրենի լեզվի ուսուցման հիմնական նպատակը բանավոր խոսքի, լսելու, կարդալու և գրելու հմտությունների ու կարողությունների զարգացումն է: Այս ուղղություններին տիրապետելու միջոցով աշակերտներին հնարավորություն է տրվում արդյունավետ օգտագործել մայրենի լեզուն՝ այն համապատասխանեցնելով տարբեր բնույթի հաղորդակցական և ստեղծագործական նպատակներին: Սովորելու ընթացքում նրանց մեջ ձևավորվում է դրական և ակտիվ տրամադրվածություն՝ ուսուցման յուրաքանչյուր նոր աստիճանի խնդիրների ուսումնասիրման, լուծման և գիտելիքների գործնական կիրառման նպատակադրումով:

Վերը նշված նպատակների իրականացման հարցում կարևորվում է դպրոցում գրական խմբակների դերն ու նշանակությունը: Անհրաժեշտ է ծայրաստիճան բարեխղճությամբ կազմակերպել ու անցկացնել նմանատիպ խմբակների աշխատանքները: Գրական խմբակի ղեկավարը, մասնագիտական իրազեկվածությունից բացի, պետք է օժտված լինի այնպիսի նկարագրով, որն ի զորու է ձևավորելու ժամանակակից հաղորդակցման համար պատրաստ անձնավորություն, զարգացնելու սովորողների՝ լսելու և բանավոր խոսք կառուցելու կարողու- թյունները: Այդ փոխկապակցված գործընթացների հաջորդական զարգացմամբ մշակվում են ազատ-անկաշկանդ խոսքի և մտքի գրագետ ու կազմակերպված արտահայտման հմտություններ Ձևավորվում են միմյանց լսելու մշակույթ և փոխներգործուն հարաբերությունների հաստատման կարողություններ: Հիմք է դրվում հանդուրժողական, ուրիշների կարծիքը գնահատող և արժանավայել պահվածք դրսևորող անձնավորության դաստիարակությանը: Սակայն չպետք է մոռանալ, որ գրագիտության հիմքն ընթերցանությունն է, ինչը ժամանակակից լիարժեք անձնավորության ձևավորման պարտադիր պայման է: Ընթերցանությունը պետք է ծառայի այնպիսի հմտությունների ձեռքբերմանը, որոնց առկայությամբ աշակերտը տիրապետում է կարդալու հիմնական մարտավարություններին և դրանց կիրառմանը: Այս իմաստով՝ կարևոր են տեքստի և գրքի ընտրությունը և ներկայացումը սովորողներին: Աշակերտը պետք է կարողանա գեղարվեստական երկում ինքնուրույն գտնել անհրաժեշտ տվյալը, տեքստը խորությամբ հասկանալու նպատակով օգտագործել տարբեր փաստարկներ, ստացված տեղեկությունը առնչակցել անհատական փորձի հետ, արդյունքները վերլուծել և կատարել եզրահանգումներ:

## Գլուխ 1

Անգնահատելի հարստություն է գրավոր խոսքին լիարժեք տիրապետելու մշակույթը: Այն սովորողին թույլ է տալիս կատարելու ստացած տարբեր տեղեկությունների և սեփական կարծիքի գրավոր արտահայտում՝ այն դարձնելով անհատի մտավոր հնարավորությունների իրականացման պարտադիր միջոց: Աշակերտը պետք է կարողանա անհատական ստեղծագործական կարողություններ դրսևորել և զարգացնել, տիրապետել մտքերի և վերաբերմունքի արտահայտման սեփական լեզվառճական միջոցներին: Աշակերտը պետք է կարողանա նախնական պլան կազմել կարդացած գրքի վերաբերյալ, հանգուցային բառերն ընդգծել, սևագիր կազմել և այն ուղղելխմբագրել՝ տիրապետելով գրավոր մտքի պարզ

ձևակերպման հմտություններին և կարողություններին, բացի այդ, ունենա ընթեռնելի ձեռագիր, տիրապետի ուղղագրության և կետադրության պարտադիր նորմերին:

Ներկայացնենք գրական խմբակների գործունեության կազմակերպմանը միտված արդի մոտեցումներ, որոնք նպատակաուղղված են այդ հիմնախնդիրների լուծմանը:

Գրական խմբակներում աշակերտների փոքրիկ խմբերը միևնույն ժամանակահատվածում կարդում են որոշակի ֆանակով գրքեր և կանոնավոր կերպով ֆննարկում են դրանք: Նրանք կարող են իրենք վճռել՝ նույն գիրքը կարդալ, թե՞ տարբեր գրքեր՝ միևնույն թեմայով Գրական խմբակներն աշակերտների օգնում են ավելի շատ տեղեկություն յուրացնել տարբեր բնույթի, ժանրի և ոճի ստեղծագործությունների վերաբերյալ: Նման միջավայրում նրանք կարողանում են գնահատել իրենց իմացության մակարդակը, խոսելու ոճը (ինքնաբերա բար սկսում են գիտակցել, որ տարբեր բնույթի տեքստերի մասին խոսելիս տարբեր ոճեր պետք է օգտագործեն):

Գրքերի մասին բանավեճն աշակերտներին հնարավորություն է տալիս միմյանց հետ փոխանակելու իրենց գրական հայացքները, տեսակետները, խորհրդածություններ անելու տվյալ հեղինակի լեզվի, ոճի կամ գրական երկի կառուցվածքի ու հերոսների մասին:

Գրական խմբակի գործունեությունն արդյունավետ դարձնելու նպատակով կարելի է ձևավորել խմբեր, որոնք կոչված են այս կամ այն գրողի ստեղծագործության տարբեր կողմերի ուսումնասիրմանը: Նրանց ուշադրությունը պետք է կենտրոնացնել այնպիսի հատկանիշների ուղղությամբ, ինչպիսիք են՝ ստեղծագործության կառուցվածքը, հիմնախնդիրը, խորհրդանիշները, միջավայրը, ժամանակը և դարաշրջանը, գործող անձինք, գեղարվեստական աշխարհը և այլն: Աշակերտների մի խումբ կարող է ուսումնասիրել, թե ինչպես է հեղինակն այս ամենն օգտագործում ընթերցողի վրա ազդելու համար:

Առաջարկում ենք գրական խմբակների գործունեության ոչ ավանդական եղանակներ: Ուսուցիչն ինքը կորոշի՝ որն է նպատակահարմար տվյալ դասարանի կամ խմբի համար:

ա) Խոսելու կամ զրույցի խմբակ

Զրույցի խմբակները կարող են ապահովել այնպիսի միջավայր, ուր աշակերտները համարձակ կարողանում են իրենց մտքերը փոխանակել ուրիշների հետ: Նմանատիպ խմբակներն իրենց գործունեությամբ նպատակային են այն ժամանակ, երբ բանավիճային թեման չի ենթադրում ճիշտ կամ ոչ ճիշտ պատասխաններ, և գործը վերաբերում է ընկալումների, զգացմունքների և տպավորությունների հաղորդմանը: Աշակերտները ֆննարկում են բարոյական խնդիրներին վերաբերող հարցեր: Բացի այդ, սա լավ միջոց է՝ խմբային համաձայնության հասնելու կամ հիմնախնդրի լուծման համար:

Մեր փորձը ցույց տվեց,որ շատ աշակերտներ կարողանում են դրսևորել իրենց հմտությունները՝ կիրառելով 8 կարողունակությունները.

1 Սովորել սովորել.

2 Համագործակցություն.լսել, հանդուրժել:

Աշակերտները նստում են աղեղաձև, և նրանցից յուրաքանչյուրին տրվում է խոսելու հնարավորություն: Եթե շրջանը մեծ է, այդ դեպքում նպատակահարմար է կազմակերպել տասըտասներկու հոգուց բաղկացած ներքին շրջան, իսկ մնացածները կարող են տեղավորվել նրանց շուրջը: Խոսելու իրավունք կունենա միայն այն աշակերտը, ով կլինի ներքին շրջանում: Աշակերտները հերթով կզբաղեցնեն իրենց տեղերը: Նա, ով կասի իր ասելիքը, ներքին շրջանից կտեղափոխվի

արտաքին շրջան, և նրա տեղը կզբաղեցնի կարծիք հայտնելու պատրաստ մասնակիցը: Շրջանը կգործի այնքան ժամանակ, քանի դեռ մասնակիցները թեմայի շուրջ ասելիք կունենան:

Պետք է բոլորին կարծիք հայտնելու հնարավորություն տալ, և ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ որևէ մեկը զերիծխող վիճակ չունենա: Ավելորդ աղմուկից խուսափելու նպատակով կարելի է աշակերտներին տրամադրել բարձրախոս:

Ցանկալի է, որ խոսելու կամ զրույցի խմբակում ընդգրկված սովորողները և ղեկավարը պահպանեն հետևյալ կանոնները.

- Բոլոր դիտողություններն անել հիմնախնդրի կամ թեմայի շուրջ և ոչ թե ելույթ ունեցող աշակերտի խոսքի վերաբերյալ՝
- Ձեռնպահ մնալ ինչպես դրական, այնպես էլ բացասական արձագանքներից՝ կապված աշակերտի ասածի հետ:
- Երբ կարծիք է հայտնում մեկը, մյուսները լուռ լսում են առանց գնահատական տալու:
- Արգելվում է միմյանց նվաստացնող դիտողություններ անել: Կազմակերպչի դերը կատարում է ուսուցիչը կամ աշակերտը՝ գործունեության հետևյալ ձևերի ապահովումով.
- տալ հստակ հրահանգներ և ապահովել դրանց կատարման հնարավորությունը,
- գնահատել յուրաքանչյուր ներդրում («Շնորհակալություն ձեր կարծիքի կամ ներդրման համար»),

5

- անհրաժեշտության դեպքում ճշտել, պարզաբանել մեկնաբանությունը (օրինակ՝ «Եթե ճիշտ եմ հասկացել, դուք ասում եք, որ ...»),
- ելույթ ունեցողին խնդրել, որ մեկնաբանություններն ու դիտողությունները հաղորդի, որքան հնարավոր է, պարզ և հասկանալի,
- ուշադիր լսել խոսողին. դրանով արտահայտվում է համերաշխություն և հարգանք տվյալ անձի նկատմամբ,
- ուշադրությունը կենտրոնացնել հնչող խոսքին և ոչ թե սպասել, թե երբ է իրենց հերթը հասնելու:

Խորհուրդներ ուսուցչին

1. Սովորողներին բանավեճի մեջ ընդգրկելու նպատակով հարկավոր է դիմել տարբեր միջոցների

• Ապահովել այնպիսի իրավիճակ, որ աշակերտները խոսեն ուսուցչից առավել և զրույցը ծավալվի ոչ միայն ուսուցչի հետ, այլև միմյանց միջև:

• Աշակերտները պետք է իրենց տեսակետները ներկայացնեն արժանավայել կերպով՝ հավաստի տվյալների վկայակոչումով, միևնույն ժամանակ պետք չէ մոռանալ, որ անհրաժեշտ է լսել ու հաշվի նստել ուրիշների կարծիքների հետ նույնպես և ընդունել նրանց կողմից արված դիտողությունները:

• Բանավեճին պետք է մասնակցեն խմբի բոլոր անդամները՝ անկախ իրենց ընդունակություններից և հնարավորություններից: Նրանցից յուրաքանչյուրը պետք է հավատա, որ իրենցից ամեն մեկը կարող է անկրկնելի ներդրում ունենալ՝ իր տարբերվող պատկերացումներով և մոտեցումներով

2. Հարցուպատասխանի ժամանակ անհրաժեշտ է խրախուսել աշակերտներին:
    - Արձագանքել ամեն մի աշակերտի առաջադրած հարցին: Եթե նա իր հարցի պատասխանը դասարանում չստանա, միասին որոնել աղբյուրը՝ որտեղ կարելի է գտնել այդ հարցի պատասխանը (այն կարող է լինել հանրագիտարան, բացատրական կամ այլ տիպի բառարան, համացանց, մատենագրություն և այլն):

- Աշակերտների հարցերին պետք չէ պատասխանել մեկնաբանական բնույթի գնահատականներով (օրինակ՝ «Այս հարցը էական չէ», «Գերադասելի էր՝ հարցն այլ կերպ ձևակերպեիր» և այլն):

3. Ցանկալի է առաջադրել ավելի մեծ քանակությամբ բաց հարցեր:
   - Նմանատիպ հարցերը ենթադրում են կանխատեսումների հմտություն, վարկածների առաջադրում, գնահատելու, եզրահանգումներ անելու անհրաժեշ- տություն, այսինքն՝ հարցեր, որոնք ընձեռում են բազմապիսի պատասխաններ տալու հնարավորություն:
   - Լավ կլինի հարցի առաջադրումից հետո աշակերտներին տրամադրվի մի տասը վայրկյան մտածելու ժամանակ

   - Նպատակահարմար է գործելառճ դարձնել այնպիսի հարցերի առաջադրումը, որոնք աշակերտներին կօգնեն գիտակցել իրենց ենթադրությունները և տրամաբանությունը (օրինակ՝ «Ինչո՞ւ ես կարծում, որ այդպես պիտի լինի, ին- չի՞ց ես այդպես ենթադրում»):
   - Անհրաժեշտ է խրախուսել աշակերտի՝ սեփական տեսակետները հիմնավորելու միտումը:
   - Խոսողին բացահայտ նկատողություն անելու փոխարեն լավ է բարեկիրթ ու թափանցիկ ակնարկ անել այն մասին, որ կայուն փաստարկի բացակայությունը լուրջ կասկածների տեղիք է տալիս ասվածի վերաբերյալ: Օրինակ՝ «Որտեղի՞ց գիտես», «Ինչո՞վ կապացուցես», կամ «Ինչո՞ւ ես այդպես կարծում»:
   - Պատասխանի ճշտության մեջ համոզվելու համար պետք է ընդհանրացնել, մեկնաբանել կամ նրանց կարծիքները (դրա համար, հնարավոր է, կար ծիքը կամ ձևակերպումը կրկնել տալ և այլ):

բ) Պատմելու համար նախատեսված խմբակ

Այս խմբակի գործունեության արդյունքում պատմելը դառնում է պատմողի սեփական փորձի, պատմվածքի բովանդակության բանավոր վերարտադրություն: Այն կարող է վերածվել հաճույք պատճառող գործունեության ինչպես պատմողների, այնպես էլ ունկնդիրների համար, նմանատիպ գրական խմբակների գործունեությունը կարող է օգտակար լինել ուսուցման բոլոր աստիճաններում սովորող աշակերտների համար:

Մինչ պարապմունքի բուն թեմային անցնելը ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է ներկայացնել իրենց կյանքից որևէ դեպք կամ պատմություն: Նա պետք է բացատրի, թե ինչպես պետք է պատմել: Խթանման այս փուլում աշակերտները հնարավորություն են ստանում լսելու մի շարք պատմողների, որոնք կարող են իրենց հաճույք պատճառել: Առավել հմուտ ներկայացվող պատմությունների օրինակով ունկնդիրները հարստացնում են իրենց փորձը (այս առումով ցանկալի է անվանի մարդկանց հրավիրել, օգտագործել տեսաձայնագրումներ): Նման գործընթացի կազմակերպմանը հաջորդում է քննարկ- վող գրական ստեղծագործության ներկայացումը և մեկնաբանումը:

Պատմելը աշակերտներին հնարավորություն է տալիս՝

- Գիտակցել պատմվածքի նախաբանի և վերջաբանի, միջավայրի, գործող անձանց և սյուժետային գծերի կարևորագույն կողմերի մասին:
- Պատմությունն ավելի լավ հաղորդելու համար պետք է օգտագործել նկարագրական և արտահայտչական լեզվառճ:
- Պահպանել բովանդակության, դեպքերի նկարագրության հաջորդա- կամությունը:
- Ընտրել համապատասխան և ազդեցիկ բառապաշար:

- Գտնել լսարանին հետաքրքրող, նրա վրա ազդող միջոցներ (օրինակ՝ շարժուձև, դիմախաղ, ձայնի տոնի, ձայներանգի փոփոխականություն և այլն):

Կարևոր է իմանալ, որ պատմելն օժանդակում է նաև կարդալու և գրելու հմտությունների ձեռքբերմանը:

Ուսուցչի գործունեությունը մինչ պատմել սկսելը: Աշակերտներին տրամա- դրել, որ նրանք հիշեն ասացվածքներ, հանելուկներ, ծիծաղաշարժ պատմու- թյուններ կամ իրենց հետ կատարված, հետաքրքրաշարժ լուրի տարբեր պարու- նակող դեպքեր:

- Պատմելու հմտության ձևավորման նպատակով աշակերտներին առաջարկել, որ նրանք հորինեն պատմվածքի տարբեր ավարտներ և ներկայացնեն միմյանց:
- Այն բանից հետո, երբ կկարդան պատմվածքը, առաջարկել, որ որոշ անհատ աշակերտներ կամ խմբեր ստեղծեն պատմվածքի շարունակություն և ներկայացնեն իրենց ընկերներին:
- Կարդացած պատմվածքի մեկ դրվագ աշակերտներին պատմել տալ տարբեր գործող անձանց դիրքորոշումից:

Ի՞նչ պետք է նկատի ունենա պատմելը սկսելուց առաջ:

- Ընտրել այնպիսի պատմվածք, որը հնարավորություն է տալիս սեփական հիացմունքը հաղորդել լսարանին և, բացի այդ, առհարկի օգտագործել բառապաշարը:
- Ընտրել պարզ, արագ զարգացող սյուժեով պատմվածք, որտեղ քիչ են գործող անձինք:
- Ընտրել պատմվածք, որը պատմողի կողմից սեփական բառերով հաղոր դելու դեպքում չի կորցնի հետաքրքրությունը :
- Անգիր սովորել կրկնվող տողերը կամ այն արտահայտությունները, որոնք օգտագործված են հատուկ ազդեցություն գործելու նպատակով:
- Ձայնագրել սեփական ձայնով ընթերցվող պատմվածքը և լսել այն:
- Հաղորդվող պատմությունն այնպես բաժանե՛լ մասերի, որ ունկնդիրները կարողանան հետ ընկալել այն (օրինակ՝ օգտագործել պատմվածքի էսքիզ, պլան, գծապատկեր կամ քարտեզ):
- Տեսանելիորեն ներկայացնել միջավայրը և գործող անձանց (առաջարկել՝ «Փակե՛ք ձեր աչքերը և պատկերացրե՛ք գործողության տեղը, գույները, նույնիսկ լուսավորումը, պատկերացրե՛ք բոլոր գործող անձանց դիմանկարները, դեմքի արտահայտությունը և շարժուձևը»):
- Մտքում, սկզբից մինչև վերջ, վերականգնել պատմվածքում ընթացող իրադարձությունները (օրինակ՝ «Նկարագրե՛ք տեսարանների հաջորդականությունը և որոշե՛ք, թե դրանցից որն է արագ ընթանում, որը՝ դանդաղ, որ տեսարանը որին է հաջորդում և այլն»):
- Պատմվածքը ներկայացնել սեփական բառերով:
- Նախապատրաստվելիս պատմել մի քանի անգամ և, եթե անհրաժեշտ է, անդրադառնալ պատմվածքի մասին արված գրառումներին:
- Մի կողմ դնել սեփական իմացությունը և պատմվածքը ներկայացնել շարժվող երևակայական դեմքերի համաձայն:

- Վարժվել պատմությունը ներկայացնել կենդանի լսարանի առջև (ընտանիք, ընկերներ, նույնիսկ ընտանի կենդանիներ):
- Աշակերտները սովորաբար առավելություն են տալիս այն պատմողին, ով ներկայացնում է իր հետ կատարված դեպքը, կամ իր կողմից հորինվածը, և ոչ թե հաղորդում է միայն կարդացած պատմվածքի բովանդակությունը: Հնարավոր է՝ աշակերտները կամենան խոսել լսած պատմության կամ դիտած կինոնկարի բովանդակության շուրջ: Պետք է խրախուսել նման նախաձեռնությունները, որպեսզի աշակերտը չունենա վախի կամ անհարմարության զգացում, ընտելացնել նրան լսարանի առջև ելույթ ունենալու և արդյունավետ պատմելու միջոցների օգտագործմանը: Անձնական պատմությունները կարող են վերաբերել, օրինակ, անվանակոչության իրադարձությանը, ընտանեկան հուշահրերին, տատիկ-պապիկների պատմություններին, ընտանի կենդանիներին հետ կապ- ված պատմություններին և այլն: Անհրաժեշտ է խրախուսել աշակերտների ստեղծագործական

հակումները և սեփական հորինվածքները ներկայացնելու ցանկությունները: Նրանք կարող են օգտագործել (փոխառել)՝

- ավանդական կամ այսպես կոչված «թափառող» սյուժեներ և թեմաները,
- մի քանի վարկածներից վերցնել մեկը, կամ միավորել դրանք,
- պատմությունը փոխադրել ժամանակի մեջ՝ անցյալից ներկա կամ ապագա, կամ մի աշխարհագրական միջավայրից մյուսը: Պետք է ուշադրության կենտրոնում պահել, թե պատմելու գործընթացն ինչպիսի միջավայրում և ինչ պայմաններում է անցնում: Ունկնդրին անհրաժեշտ է այնպիսի միջավայր, որի մեջ ինքն իրեն հարմարավետ զգա: Դա կարող է լինել հարմար բազկաթոռով, գորգով կամ բարձերով կահավորած հատուկ անկյուն (պարզ է, մենք ճկատի չունենք, որ այսպիսի անկյուն կահավորած լինի հենց դասասենյակում: Դրա համար անհրաժեշտ է հատուկ կահավորել մի սենյակ կամ գրադարանում որոշակի տարածք): Պատմողը ևս հարմար վիճակ պետք է ունենա: Նա պետք է նայի ուղիղ լսարանին, որպեսզի հետադարձ տեսողական կապ հաստատվի նրանց հետ: Պատմողը կարող է սենյակը մթնեցնել, միացնել երաժշտություն կամ անել ցանկացած նախապատրաստական գործողություն, ինչն իրեն կօգնի ստեղծել համապատասխան մթնոլորտ: Ներգործությունը կայունացնելու նպատակով նա կարող է ցուցադրել ոչ բառային միջոցներ, օրինակ՝ համապատասխան հագուստ՝ գլխարկ, թիկնոց, նկարներ, դիմակ, պատմուճան, կինոնկարներից դրվագներ և այլն:

Նման ներկայացումը մի քանի առավելություն ունի.

- Օժանդակում է աշակերտի պատճառաբանական կարողության զարգացմանը, հետաքրքրության մթնոլորտի առաջացմանը:
- Միավորում ու մեկտեղվում է տեսողական և բանավոր խոսքի գործունեությունը:
- Բարդույթավորված (ամոթխած) պատմողի համար ապահովում է ինքնադրսևորվելու հնարավորություն:

Ի՞նչ գործողություններ են անհրաժեշտ պատմելուց հետո: Երբ պատմելն արդեն ավարտվել է, սրան հաջորդում է տպավորությունների ու փորձի մասին խոսելու ժամանակը: Սա մի տեսակ նախադուռ է, որ աշակերտները գիտակցեն, թե ինչ են լսել, ինչի համար և ինչպես: Պատմողին ևս տրվում է ինքնագնահատման հնարավորություն: Քննարկելով այն, ինչ լսել են, աշակերտներին հնարավորություն է տրվում մտածել լսածի սեփական մեկնաբանությունը, և ինչ ազդեցություն են ունեցել իրենց անհատական փորձը և ձեռք բերած գիտելիքը այդ մեկնաբանության առթիվ:

Տվյալ սովորողի պատմելառճը քննարկելու նպատակով ցանկալի է, որ ուսուցիչն այդ գործընթացը տեսանկարահանի:

Դա գնահատելու և ինքնագնահատման լրացուցիչ հնարավորություն կընձեռի:

Տեսաձայնագրությունը լսելով և դիտելով հնարավոր է գնահատել պատմողի

- մտքերի ձևավորումը, տրամաբանական կապը,
- դադարների օգտագործման արդյունավետությունը,
- ձայնի ուժգնությունը և տևողությունը, հնչերանգը,
- ժամանակի բաշխումը,
- կրկնությունները:

Տեսաձայնագրումը դիտելուց կամ լսելուց հետո աշակերտն անպայման կկարողանա որոշել, թե ինչն է անհրաժեշտ մշակել ու շտկել:

Առաջարկում եմ պատմելը գնահատելու հարցարանի նմուշօրինակ:

Որևէ պատմություն/լուր ներկայացնելու կարողության գնահատման հարցարան

Աշակերտի անուն, ազգանուն՝_____

Ամսաթիվ_____

| Գնահատման չափանիշները՝ | Միավորը | Մեկնաբանություններ |
|---|---|---|
| Հետաքրքրություն առաջացնելը | | |
| Լսարանի արձագանքը | | |
| Պատմելու պատկերավորությունը և արտահայտչականությունը | | |
| Բարեկամական, դրական վերաբերմունք լսարանի լեզուները նկատմամբ | | |
| Արդյունքում | | |
| Ձայնը, առոգանությունը, խոսքի պարզությունը | | |
| Ձայնի բարձրությունը, ձայներանգը | | |
| Արդյունքում | | |
| Կազմակերպումը, նախաբանի ազդեցիկությունը | | |
| Իրադարձությունների հաջորդականությունը | | |
| Եզրակացության արդյունավետությունը | | |
| Արդյունքում | | |
| Ոչ բառային միջոցներ՝ ժեստեր, դիմախաղ | | |
| Տեսողական կապ | | |
| Մարմնի շարժումներ | | |
| Արդյունքում | | |

Այսպիսով՝ոչ ավանդական խմբակի նմանատիպ ուսումնական գոր- ծունեության շնորհիվ սովորողները հաճույքով կմասնակցեն գրական խմբակի դասերին, և այն չի լինի ինքնանպատակ (նախատեսված սոսկ ուսուցչի դրույքը կամ միջոցառումների ցանկը լրացնելու համար):

11

Գրականություն

1. Ա. Արնաուդյան, Կառուցողական կրթության հիմունքներ և մեթոդներ, Ձեռ- նարկ ուսուցիչների համար, ԱՅՐԵՔՍ, «Տիգրան Սեծ», Երևան, 2005, 136 էջ:

2. Ա.Հովհաննիսյան, Համագործակցային ուսուցում, Ձեռնարկ, Երևան, «Անտարես», 2006, 124 էջ:

3. Մայա Ինասարիձե, Լեզվի ուսուցման մեթոդներ, «Սախմեդո», Թբիլիսի, 2008:

12